

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 3

«ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԵՍՏՐԱՆԻ ՆԻՍՏԻ»

26 սեպտեմբերի 2011թ.

ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային խորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի անդամներ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ և ՀՀ տարածքային կառավարման նախարարության տարածքային կառավարման և զարգացման վարչության տարածքային զարգացման ծրագրերի բաժնի առաջատար մասնագետ Ս. Միքայելյանը:

Օրակարգում՝

1. ՀՀ Սյունիքի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման, աշխատավարձերի պարտքերի մարման ընթացքի և առկա խնդիրների մասին:
/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ա. Մարդյան/
2. Հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի արդյունքների և աշնանացանի ընթացքի մասին:
/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ս. Թանգյան/
3. 2011թ. մարդահամարի նախապատրաստական աշխատանքների ընթացքի և առկա խնդիրների մասին:
/Զեկուցող՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Սյունիքի մարզային գործակալության պետ, մարդահամարի մարզային հանձնաժողովի նախագահի տեղակալ Վ. Գրիգորյան/
4. Տեղեկատվություն օրենսդրական առանձին ակտերում կատարված փոփոխությունների մասին:
/ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Կ. Կոզմանով/

Մարզխորհրդի նիստը ներածական խոսքով բացեց ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

Օրակարգի առաջին հարցի՝ «ՀՀ Սյունիքի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման, աշխատավարձերի պարտքերի մարման ընթացքի և առկա խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Աշոտ Մարդյանը:

Օրակարգի երկրորդ՝ «Հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի արդյունքների և աշնանացանի ընթացքի մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ

Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանը:

Օրակարգի երրորդ՝ «2011թ. մարդահամարի նախապատրաստական աշխատանքների ընթացքի և առկա խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Սյունիքի մարզային գործակալության պետ Վլադիմիր Գրիգորյանը:

Օրակարգի չորրորդ՝ «Տեղեկատվություն օրենսդրական առանձին ակտերում կատարված փոփոխությունների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Կառլեն Կոզմանովը:

/Կցվում են զեկուցումները/:

Օրակարգի առաջին և երկրորդ երկրորդ հարցերի վերաբերյալ ելույթ ունեցան Տոլորս համայնքի ղեկավար Մարատ Առաքելյանը, Շրվենանց համայնքի ղեկավար Արմինե Մանուկյանը:

Մարդահամարի հետ կապված խնդիրներով հարցադրումներով հանդես եկան քաղաքային համայնքների ղեկավարները:

Մարզխորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

ՀՀ Սյունիքի մարզպետ

 Ս. Խաչատրյան